



Ս. ՅԱԿՈԲԻ Ն Ե Ր Ս Է Ն

* Շր. 4 Հոկտ.— Տօն Ս. Խաչի: Ս. Պատարագը մատուցուցաւ Ս. Գլխա-
դրի վերն գտնուող Ս. Նշան վերնամատուոին մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ.
Ասպետ Արդ. Պալեան:

* Կիր. 5 Հոկտ.— Բարեկենդան Վարագայ Ս. Խաչի պահոց: Ս. Պատարա-
գը մատուցուցաւ Ս. Յարութեան Տաճարի մեր վերնամատուոին մէջ: Ժամա-
րարն էր Հոգշ. Տ. Գէորգ Վրդ. Նազարեան:

* Որ. 10 Հոկտ.— Նախատօնակը պաշտուցաւ Ղպտիներու Ս. Գէորգ ե-
կեղեցիին մէջ: Հանդիսապետն էր Գերշ. Տ. Ծափէ Արքեպս. Աճեմեան:

* Շր. 11 Հոկտ.— Ս. Գէորգայ զօրավարին: Առաւօտուն, Գերշ. Տ. Ծափէ
Արքեպիսկոպոսի գլխաւորութեամբ, Միաբանութիւնը մեկնեցաւ Ղպտիներ-
ու Ս. Գէորգի վանքը, որու եկեղեցիին մէջ մատուցուցաւ Ս. Պատարագ: Ժա-
մարարն էր Հոգշ. Տ. Սևան Վրդ. Ղարիպեան: Բարոզեց Հոգշ. Տ. Վահան Վրդ.
Թօփալեան: Ս. Պատարագէն ետք Միաբանութիւնը պատուասիրուցաւ Ղրպ-
տիներու եպիսկոպոսական փոխանորդէն:

— Կէսօրէ ետք, վաղուան Վարագայ Խաչի տօնին առիթով, Ամեն. Պատ-
րիարք Ս. Հօր գլխաւորութեամբ, Միաբանութիւնը «Հրաշափառ»ով մուտք գոր-
ծեց Ս. Յարութեան Տաճար, ուր պաշտուցեան երեկոյեան ժամերգութիւնն ու
նախատօնակը մեր վերնամատուոին մէջ: Ապա կատարուցաւ Տնօրինական
սրբատեղիներու այցելութեան հանդիսաւոր թափօր Տաճարէն ներս: Թափօրա-
պետն էր Հոգշ. Տ. Սևան Վրդ. Ղարիպեան:

* Կիր. 12 Հոկտ.— Տօն Վարագայ Ս. Խաչին: Գիշերային և առաւօտեան
ժամերգութիւնները պաշտուցեան Ս. Յարութեան Տաճարի մեր վերնամատու-
ոին մէջ: Ապա, Գերշ. Տ. Ծափէ Արքեպս. Աճեմեան մատուց օրուան հանդիսա-
ւոր Ս. Պատարագը՝ Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ, որուն ընթացքին նա-
խագահեց սրբավայրին առջև կատարուած «Հայրապետական Մաղթանք»ին՝
Ն. Ս. Օծութիւն Տ. Տ. Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի օծման 20-րդ
տարեդարձին առիթով:

— Իսկ ի Ռեմիէ, Ս. Գէորգ վանքի եկեղեցիին մէջ, նախորդ տարիներու նը-
ման կատարուցեան ուխտագնացութիւն և մատաղօրհնէք: Հանդիսութիւննե-
րուն կը նախագահէր տեղւոյն Տեսուչը՝ Հոգշ. Տ. Նորհան Վրդ. Մանուկեան:
Պատարագեց Հոգշ. Տ. Ասպետ Արդ. Պալեան:

* Շք. 18 Հոկտ.— Ս. 72 աշակերտացն Քրիստոսի: Ս. Պատարագը մատուցուցաւ Մայր Տաճարի ներքին զաւիթը՝ Ս. Գէորգի սեղանին վրա: Ժամարարն էր Հոգշ. Տ. Գեղարդ Արդ. Տառնալարեան:

* Կիր. 19 Հոկտ.— Ս. Պատարագը մատուցուցաւ Ս. Յարութեան Տաճարի մեր վերնամատուռին մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Աղան Վրդ. Պալիօղեան:

* Որ. 24 Հոկտ.— Թարգմանչաց հանդիսատր նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Գերշ. Տ. Շահէ Արքեպս. Աճէմեան:

* Շք. 25 Հոկտ.— Ս. Թարգմանչաց վարդապետացն մերոց (Տօն ազգային և եկեղեցական): Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ Ս. Պատարագը մատուց Հոգշ. Տ. Ասպետ Արդ. Պալեան: Ապա, ըստ սովորութեան, կատարուցաւ հոգեհանգստեան հանդիսատր պաշտօն՝ Ազգիս և Ս. Աթոռիս հանգուցեալ բարերար Գալուստ Կիլիկեցեանի, տիկնոջ և ծնողաց հոգիներուն համար: Սոն արարողութեան կը նախագահէր Հոգշ. Տ. Հայկասեր Վրդ. Պալրամեան:

* Կիր. 26 Հոկտ.— Ս. Պատարագը մատուցուցաւ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Նուրհան Վրդ. Մանուկեան:

* Շք. 1 Նոյմ.— Ս. Չորից Աւետարանչացն: Այսօրուան Ս. Պատարագը որ կը մատուցուէր Ս. Յարութեան Տաճարի զաւիթին արևելակողմը գտնուող Ս. Յովհաննէս Աւետարանչի մատուռին մէջ, 15րդ տարին ըլլալով մատուցուցաւ Ս. Գլխադիր, Ս. Յարութեան Տաճարի բակը շինուածանիւթերով լեցուն ըլլալուն: Ժամարարն էր Հոգշ. Տ. Գէորգ Վրդ. Նազարեան:

* Կիր. 2 Նոյմ.— Ս. Պատարագը մատուցուցաւ Ս. Յարութեան Տաճարի մեր վերնամատուռին մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Ասպետ Արդ. Պալեան:

* Բշ. 3 Նոյմ.— Ս. Յովսէփայ Աստուածահօրն: Ս. Պատարագը մատուցուցաւ Գեթսեմանիի Ս. Աստուածածնի Տաճարին մէջ, Հայր Յովսէփի գերեզմանին վրայ: Ժամարարն էր, ըստ սովորութեան, Տաճարին Տեսուչը՝ Հոգշ. Տ. Սևան Վրդ. Ղարիպեան: Երթ ու դարձի թափօրները գլխաւորեց Հոգշ. Տ. Վահան Վրդ. Թօփալեան:

* Շք. 8 Նոյմ.— Ս. Երկուտասան Վարդապետացն: Ս. Պատարագը մատուցուցաւ Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգշ. Տ. Գէորգ Վրդ. Նազարեան:

— Կէսօրէ ետք, վաղուան Գիտ Խաչի տօնին առիթով, Միաբանութիւնը, գլխաւորութեամբ Ամեն. Պատրիարք Ս. Հօր «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար: Ս. Գերեզմանի և Գիտ Խաչի այրի ուխտերէն ետք, մերջինին կից՝ Ս. Լուսատրիչ եկեղեցիին մէջ պաշտուեցան երեկոյեան ժամերգութիւնն ու նախատօնակը: Ապա կատարուցաւ Տնօրինական սրբատեղեաց այցելութեան հանդիսատր թափօր Տաճարէն ներս: Թափօրապետն էր Հոգշ. Տ. Գեղարդ Արդ. Տառնալարեան:

* Կիր. 9 Նոյմ.— Գիտ Խաչ: Գիշերային և առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան և Ս. Պատարագը մատուցուցաւ Ս. Լուսատրիչ եկեղեցիին մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Սևան Վրդ. Ղարիպեան: Ապա կազմուցաւ մեծահանդէս թափօր՝ գլխաւորութեամբ Ամեն. Պատրիարք Ս. Հօր: Թափօրը նախ իջաւ Գիտ Խաչի այրը, ուր Աւետարանի ընթերցումէն ետք բարձրացաւ Ս. Գերեզմանին շրջափակը, երիցս դառնալով անոր և ապա մէկ անգամ՝ Պատանատեղիին շուրջ: Ն. Ամենապատուութիւնը Կենաց Փաշտի մատուցելով կ'օրհնէր Տաճարը լեցնող հաւատացեալներու բազմութիւնը: «Խաչի քո Քրիստոս» շարականի երգեցողութենէն և խնկարկութենէ ետք, Ս. Լուսատրիչ եկեղեցիին մէջ վերջ գտաւ փառատր այս հանդիսութիւնը:

* Շք. 15 Նոյմ.— Տօն Ամենայն Սրբոց: Ս. Պատարագը մատուցուցաւ Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգշ. Տ. Հայկասեր Վրդ. Պալրամեան:

* Կիր. 16 Նոյմ.— Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի մեր վերնամատուռին մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Գէորգ Վրդ. Նազարեան:

* Ուր. 21 Նոյմ.— Ս. Հրեշտակապետաց նախատօնակը պաշտուեցաւ համանուն եկեղեցիին մէջ: Հանդիսապետն էր Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս. Ասլանեան:

* Ըր. 22 Նոյմ.— Տօն Ս. Հրեշտակապետացն՝ Գաբրիէլի և Միքայէլի: Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ և Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Հրեշտակապետաց եկեղեցիին մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Գեղարդ Արդ. Տաւուտյարեան: Ս. Պատարագէն ետք, ըստ սովորութեան, կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտօն՝ ազգային բարերարունհի Աղանի Ժէվահիրճեանի և պարագաներու հոգիներուն համար: Արարողութիւններուն կը նախագահէր Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոս: Ապա Միաբանութիւնը պատուասիրուեցաւ Վանքի Տեսչարանը Տեսուչ Հոգշ. Տ. Սեան Վարդապետի կողմէ:

* Կիր. 23 Նոյմ.— Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Հրեշտակապետաց եկեղեցիին մէջ: Ժամարարն էր, ըստ սովորութեան, նոյն Վանքի Տեսուչը՝ Հոգշ. Տ. Սեան Վրդ. Ղարիպեան:

* Ըր. 29 Նոյմ.— Ս. Առաքելոցն՝ Անդրէի և Փիլիպպոսի: Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոս վարդապետական Ս. Պատարագ մատուց. Ս. Գլխադրի մատուռին մէջ:

* Կիր. 30 Նոյմ.— Բարեկենդան Յիսնակի պահոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի մեր վերնամատուռին մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Ասպետ Արդ. Պալեան:

* Դշ. 3 Դեկտ.— Ս. Կոյսի ընծայման հանդիսատր նախատօնակը պաշտուեցաւ Մայր Տաճարին մէջ, նախագահութեամբ Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս. Ասլանեանի:

* Եշ. 4 Դեկտ.— Ընծայումն Ս. Աստուածածնի: Առաւօտուն, Ամեն. Պատրիարք Ս. Հօր գլխատրութեամբ, Միաբան Հայրեր ինքնաշարժներով իջան Գեթսեմանիի ձորը ու «Հրաշափառ»ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար, ուր Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ օրումն հանդիսատր Ս. Պատարագը մատուց. Հոգշ. Տ. Գէորգ Վրդ. Նազարեան, եպիսկոպոսական խոյր ի զըլոյն: Ապա, ըստ սովորութեան, կատարուեցաւ հոգեհանգստեան հանդիսատր պաշտօն՝ Ս. Աթոռիս և ազգիս բարերար Կիլլապի Կիլլաքէնկեանի և Կիլլաքէնկեան գերդաստանի համայն անջեցեալներու հոգիներուն համար:

* Ըր. 6 Դեկտ.— Ս. Գրիգորի Սքանչելագործին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Գլխադր: Ժամարարն էր Հոգշ. Տ. Սեան Վրդ. Ղարիպեան: Վերաբերումը կատարուեցաւ Մայր Տաճարի ներքին զաւիթին մէջ գտնուող Ս. Նիկողայոսի խորանին վրայէն:

* Կիր. 7 Դեկտ.— Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Գէորգ Վրդ. Նազարեան:

* Ուր. 12 Դեկտ.— Առաջին Լուսարոյաց նախատօնակը պաշտուեցաւ Մայր Տաճարին մէջ: Հանդիսապետն էր Հոգշ. Տ. Հայկասեր Վրդ. Պայրամեան:

* Ըր. 13 Դեկտ.— Ս. Առաքելոցն և առաջին Լուսարոյացն մերոց՝ Թադէոսի և Բարթողիմէոսի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Գլխադրի մատուռին մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Գեղարդ Արդ. Տաւուտյարեան:

* Կիր. 14 Դեկտ.— Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի վերնամատուռին մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Նուրհան Վրդ. Մանուկեան:

* Դշ. 17 Դեկտ.— Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Հոգշ. Տ. Յովսէփ Վրդ. Մամուր:

ՏԻՐՈՒՆԻ

ՅԱԿՈԲ ԶԱՔԱՐԵԱՆ

(1925 - 1975)

Ս. Յակոբեանց Միաբանութեան երիտասարդ անդամներէն Հոգշ. Տ. Գեղամ Ծ. Վրդ. Զաքարեան և Հոգշ. Տ. Ասպետ Աբղ. Պալեան դժբախտութիւնն ունեցան կորսնցնելու Պէյրութարնակ իրենց եղբայրը և մօրեղբայրը՝ Յակոբ Զաքարեան, զոհ՝ Լիբանանի վերջին դէպքերուն:

Հանգուցեալը ծնած էր Պէյրութ 1925-ին, եկեղեցաւէր ընտանիքի մը մէջ: Ան երկար տարիներ ծառայած էր Թիւրօ Թաղի Ս. Վարդանանց եկեղեցիին, և մինչև իր եղեռական մահը անգամ էր Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դրպրեմանքի «Ս. Ներսէս Շնորհալի» երգչախումբին:

Յակոբ Զաքարեան Նոյեմբեր մէկի առաւօտ երբ դործի կ'երթար, զբաղուէն կը վերաւորուի կապարի հարուածով մը և ուշակորոյս վիճակի մէջ կը փոխադրուի հիւանդանոց, ուր տասնհինգ օր տաղնապալի վիճակի մը մէջ մընալէ ետք կը մահանայ Նոյեմբեր 15-ին:

Հանգուցեալը իր ետին կը ձգէ այրի մը և երեք զաւակներ:

«Սիւն», յանուն Սրբոց Յակոբեանց Միաբանութեան, սրտազգած ցաւակցութիւն կը յայտնէ հանգուցեալին պարագաներուն, հայցելով Աստուծոյ միօրթարութիւնը:

* Եշ. 18 Դեկտ.— Տօն Ս. Հարցն Եգիպտացոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Մակարայ մատուոյն մէջ: Ըստ սովորութեան, պատարագիչն էր Խոստովանահայրը՝ Հոգշ. Տ. Մաշտոց Վրդ. Բարիլուսեան:

* Ծր. 20 Դեկտ.— Ս. Նիկողայոսի Սքանչելագործին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգշ. Տ. Գեղարդ Արդ. Տաւուլարեան:

* Բշ. 22 Դեկտ.— Յղութիւն Ս. Աստուածածնի: Առաւօտուն, գլխադրութեամբ Գերշ. Տ. Ծահէ Արքեպս. Աճէմեանի, Միաբան Հայրեր ինքնաշարժներով իջան Գեթսեմանիի ձորը ու «Հրաշափառ»ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար, ուր օրուան հանդիսատւոր Ս. Պատարագը՝ Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ մատուց Գերշ. Հանդիսապետ Արքազանը և քարոզեց «Բազումք են կոչեցեալք և սակաւք ընտրեալք» քնարանով:

* Ուր. 26 Դեկտ.— Նախատօնակը պաշտուեցաւ Մայր Տաճարին մէջ, նախագահութեամբ Գերշ. Տ. Ծահէ Արքեպս. Աճէմեանի:

* Ծր. 27 Դեկտ.— Ս. Յակոբայ Մծբնայ Հայրապետին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Գլխադրի մատուոյն մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Սևան Վրդ. Ղարիպեան: Վերաբերումը կատարուեցաւ Աւագ Սեղանին դիմաց, սուրբին նկարով շինուած շարժական սեղանին վրայէն:

* Կիր. 28 Դեկտ.— Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի մեր վերնամատուոյն մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Գեորգ Վրդ. Նազարեան: Քարոզեց Գերշ. Տ. Ծահէ Արքեպիսկոպոս, «Զընթացսն կատարեցի, ըգհատաւսն պահեցի...» Պօղոս Առաքեալի խօսքերը ունենալով իբրև քնարան: